

թեան Տփղիսու, ի Մոսկուա 1887: — ԺԴ. Քննադասութիւն ի մերայ գրաց Լաւերի՝ Հայկական ընտիր Հասուածք (Armenische Chrestomathie) ի Քննադասուական համազգային հանդիսի (Revue critique internationale), 1881: — ԺԵ. Կենացդրուրիւն և գրականական վաստակք Սկել-Մարտին հայագիտու, ի Փոքր հանդիսի 1881, թիւ 5: — ԺԶ. Քննադասուրիւն աշխարհագրուրիւն աշխարհագրուրիւն Արտարակելուց ի Հ. Արսենէ Սուբրի, ի Մոռուենէ լրագրի, 1882 (Էջ 447—452) K. de Raistaing ստորագրութեամբ: — ԺԷ. Աշխարհագրուրիւն Հայաստանի, ընծայելոյ Մոլիսիսի Խորենացոյ, հայ բնագիր, թարգմ. ուսու և ծանօթութիւնը. առա. ի Պ. բուրգ ի 1877 (Էջ իլ+84+26), աշխարհացոյց տախտակօք. քննադասութիւնն ի Փոքր հանդիսի 1877, թիւ 4:

Ալրէն համառուսեցինք Պատկանեանի կենացդրութիւնն մինչ ի 1862. 1872 թուականին թոշակաւոր ուսուցիչ եղաւ ի համալսարանին Պետերբուրգի, և ի 1885 թղթակից անսամբ Գիտութեանց Ակադեմիոյ: Ճանապարհորդութիւններ ալ ըրած է ի Գաղղիա, ի Գերմանիա, յիտալիա, ի Կովիզան և այլուր. մեռու յ' 2 ապրիլ 1889: իր որդին, Ա. Պատկանեան, թէպէտեւ զիտութեանց հետամուտ, բայց բանասիրական ուսումամբը ալ կը զրադի, որովհետեւ երկասիրած է ընտիր հեղինակութիւնն մը Ռւսիական վիպասանականաց վրայ, և որ հրատարակուած է ի Պետերբուրգ, 1894:

Կը մնայ մեզ խօսիլ Մկրտիչ Էմին բանասիրին վրայ, և անոյ կնքել մեր տեսութիւններն Ռուս հայ և հայագէտ բանասիրաց վրայ:

(Շարայարելի)

Հ. ԲՈՒԽԱՐԲԱՌՈՒՌԻԹԻՒՆ

(Ցես յ'Էջ 306)

1536. Կուարանջար. Լուարանջարի տակ. Կուամն Բանջար.

Ըտրի կերպու գրած է հին Բժշկարանն. ի բառու Գալիենոսի հոմանիշն զրուած կամիէլ կամ Ղամիլ, այլ և Արդիսու: Բժշկարան մի զրէ և Ղանրիլ, խոտ, մովս և նեղն? Երկայն, կարմիր յալարտուկ է. Արդիսու: և Պէյթարայ. Ղամիլին (Անչ). Է նոյն կնրին զոր յիշեցիկ, (թ. 1436). Բժշկարան բառու զիրք մ'այլ զրէ, թէ այսոր և Յոյնք Ակսանեայ կամ Ղասկարի ասեն: Բուսաբանք և բնախոռք տարակուսին ինչ ըլլառոն, և պէսպէս կարծեն. ոմանք այլ համարին թէ ըլլայ լ. Taraxacum, Փ. Pissenlit. Լատին անունն յունարենէ առնուած նշանակէ Խաղաղցընող Լեռնային տեսակն՝ T. Montanum, յիշուած է ի Ռ-Հ. — T. Serotinum, ի Բարերդ. — T. Officinale genuinum և T. Crispidifolium ի Թ-Հ. և T. Stenoscephalum Բարերդոյ մօտերում. — ուրիշ այլեւայլ տեսակներ և կիրիկիաւ:

1537. Լուանի ծառ.

Թերեւս վերոյիշեալն կռ. բայց տարբեր կերպով զրեն Բժշկարանք ոմանք. Ասեն, թէ (Մարանն) խերանի ծառն կու նմանի. և ոմանք ասեն, թէ ստոյդ

ս կտանի ծառն է: — Ասէ Գոր. Թէ Մայիսց ասեն ինքն ժառանքն է բարակ և
ս երկայն, և իր փայտէն առօք կոտ շինեն ի Դամասկոս, և ինքն շատ կոտ լինի.
և և տերեւն դեղնուկ կոտ լինի. և ինքն կապողութիւնն ունի և թէ եթեւութիւնն
ո ունի: Եւ ասացել է գրոց շինոցն, թէ այս փայտին որ Մարտն կ'առն' իր
ք միրգն տափէ և առջու որպէս Գողթոր ո, եւ այլն կամքրկապցին ապ կ'ըսէ.
« Ինքն կարմիր միրգ է, և մէջն կոտ ունի. հոգ է և չոր. յան հասունն է ո:

1559 Կողուախոս.

Բարուկ զայրի և Տեղկատուն անռաւմբ լիշտ եմք . աւելցնեմք հս առց Ար. անօսն Պըր էլ-քարուն , Նախտ ՀՅ. Ամիրտ . զրի Պըր ՛լ-Ղառտէնէն , որ ո Պ. Ապաղող կ'առն . և Հու (Վելլատ) - Ջապիտ (L. Psyllium) ասէ . և « ինքն երկու ցեղ է . Ապիտակ և Կարմիր է . և այլ առաջած է . թէ լաւ այն է » որ ի ջրին յառակն ինչու . Հաւա այն է որ ինքն չի ծեծեն ի բան տանին . ու ասէ Պո . թէ զինքն ծեծած ի բան տանին . կու ո սպաննէ . և թէ այն մարդն որ զայս ծեծած ու ուսէ , իր ղեղն խօսիպէն և Պղպեղն է » . . . բօսոյն յունարէն անօսն Լու նշանափ , անոր համար տեսակ մի Լուսախոս համարուի . Փ . այլ այսպէս կ'ըսն Herbe aux pucees . Լ. այլ յատուկ Plantago Coronopus , և Plantago Psyllium , որ իրարմէ թիլ զանազանութիւն . գտուին և ի Հայս . տեսակ մ'այլ կայ որ Եփրատական կ'ըսուի . P. Euphraticus և ՄԵփրատինյ կողմիք ճանցուած է :



1560. Կտրածի խոտ.

« Խնքը խոտ-մել է , և դեղին ծաղիկ ունի . և
» այս խոտին թ. Այս օրի ասէ . զէտ խախացք
» զկաթն կու կապէ . և թէ զեալդին սպեշանի
» առնես և գնես ի վերաց կրակին այրածին՝ ոգ-
տէ » . Ամբու այսպէս կը սէչ Ղալիոն անուամբ , ըստ Պէյթ . **غاليون** , որ է Լ.
Galium, Ph. Gaillet, Կաղուկ խոտի ազճակից կրնայ համարուի . տես թ. 1533.

1875. Հազար.

Մանօթ կրթեց տերեւներով բանջարեղէն, լ. Latuca, Փ. Laitue. Ար. շ. և թ. Մասօ կ'ասէ. և լաւն այն է որի յածվնիքն լինի, և գեղին լինի. Քառն
և կու բերէ մարդուն, և զանութիւնն կու տանի. և ձրի գրացելուն և մալուխու-
ս լիպյն օտքէ. և թէ զինովք՝ հետ ուսեն՝ շնորհա որ չափով հարի. և իր ջարն
և օգտէ տար գիացաւութեան... և օգտէ այն հազին՝ որ ի տապաւթենէ լինի. և
պ այն Հազարն որ ի իբրանեն կու բունին՝ իր կաթն օգտէ կարճահարին, և յի թո-
ռ զուր որ մազ րուսնի. բաց զաշքն վասուժ տանէ .. և յէ պատեհ որ զ Հազարն լիպ-
ունան և ուսեն. խափաթն կու խափանի ոչ — Հայերէն անանն Հազար ըստ. Գր.
Մագիստրոսի վասն բազմաթե թթութեան. առածէ. — Հնի թէկո. խոտեղնաց դասին
դրէ զ Հազար, բայց նախագաս. և Աղէկ ցա և աղէկ արցյն ընծայէ ի մարդ,
և կ'ըսէ. և քան զայլ խոտերու ախորդական է. զամփրայի տարութիւն անցընե-
ց զատամթ ուժովլցնէ և ցամքեցընէ, եւ նոր բառածն. և աղէկ կերայլքէ. կանաց
և կաթն յօրդրէ. և թէ հում ուսես թէ խաչած՝ ախորդական է. և անձից տառել
ո քան յիմաստ, հայն ո զամենայն խոտեր ու ... Տնտեսութեան մէջ թէ սակ

թէ աղցան ուժուելուն, Վաստակոց գիրքն երկարօրէն զրէ (ՄԵ), « Վասն Հազար » րի. Թէ կամիս որ Հազարն բոլոր գայ և մեծ տակ առնու, արքեա աղէկ և սոտէպ » ջրեա յառաւօտուն, և երբ թիզ մի լինի զիւր տակն քաղհանչով բաց և թազէ » պափրէի կուռզ օծ, և զիւր հոդն ի վերայ բեր և ծածկեա, և մենակ լրեա. և երբ » աղէկ մեծանայ, ճեղքեա զմիշնածիլ սրտուկն սուր դանակով, և ասիակ քարուկ » մի կամ կղմինզը ի վերայ դիր, և թող որ տափիկեցանէ զինքնէ, քանի մեծաւ » նայ, քարն ի հետ մեծացաւ, նա խիստ գեղեցիկ լինի և աղուորւ. Եւ թէ ուզես » Հազար լինել որ Թրընչի համ գայ յիրեա, այս Թրընչի կուտ, ճեղքեա և զշա » զարի հուսնան մէջ զիր և յիրեար բեր, և մուշախայով փաթաթեա, և տնկեա » նոյն օրինակովն նա բուսանի և համն թինջի լինի... թէ ոք զինքն շատ ուսէ, ո լոյծ առնէ, և թէ սակաւ կապւ. Եւ որ զիր ջուրն ի վերայ կարմիր ելընդի դնէ ո կամ կարմրած աշաց, շատ օգտէ. . . Եւ Հազարին՝ զիտնականզն՝ մեռելուսեաց և մահիճ են անուանել ու յոյն նազիրն կըսէ մեռելոց կերակուր. վասն զի շարա գուշակ համարուէր, և ի յիշտառկ մեռելոց կ'ուսուէր. Մեր Եղնիկ զգօն վարդապէտն Հազարի այլեւայլ յատկութիւնները հակառակ զրէ. « ԶՀազարի եթէ » ի սոթ ժամանակի ուսիցէ ոք, քանզի զովացուցիշ է, զուասս ի փարզն փաստէ, և եթէ ի հով ժամանակի ուսիցէ ոք, վնասէ. և եթէ զնուրն քանեալ անազակ ըմպիցէ ոք՝ սատակի, և եթէ զսերմն աղացեալ ջրով ըմպիցէ ոք՝ ի ցանկութենէ արկանէ ու:

1596. Հալորի.

թժիշ վարդապէտ մի (Ախուսն) Թ. Եափիրուն անուան համար զրէ. « Որ է Հալորի եէմիշի ծառ »: Ար. Եապրուն, ինչպէս յիշած եմք՝ Մանրագոր կամ Լզոտակ նշանակէ. կարելի էր Մանրագորի պտուղն ըլլալ, բայց պտղը ծառ կոչչէն տարակցոս տայ. իսկ անուան անտարակցոս այնպէս է և ոչ Սալորի:

1597. Հալուէ.

Այս անուամբ երկու տարրեր ցեղի բոյօթ կ'իմացուին, մին ծառ, միւսն խոտեղէն և աս՝ որ և ըստ Ար. Սապր կոչուի, յաճ. « է, ըստ Ամիրուն Աղվաց (Հաւ) ո լուայ? ինքն Սուսանի պէս խոսի մի քամուքս է, և լաւն այն է որ Սզուրափի լինի և կարմրեն զեր լիրդ լինի, և շուտ լուսի. Երեք ցիղ է, մէկն Առողուսորի, մէկն Արափի, մէկն Ամանանի, և քան զամէնն Սուզուտրին լաւ է. և իր ջուրն Զաֆ. ո բանի ջուր կու նմանի, և հոտն նման է պափրու եղուն.. և քնքուշ է և պյուտառ և և շուտ փշրի. Եւ այն որ Արափին է՝ աղէկ նշաննի ջուրնի.. և այն որ Ամանանի է (Ալմաս կամ Ամանանանի, ցանցձառ) պեղծ հոս ունի և սեւ է, և այն որ Սուզուտրի է (Սուզուտրայ կղզուց) քանի որ հին լինի՛ սեւնայ. և Տաճիկն Սարան կինոսն Աղվէ ասէ, և Ար. Արուվայ սանեն՝ Մարգիկն այն նման է Սուսանի, և տես ո բեւն թանձր է և մեծ քան զՍուսանին տերեւն. և լիր է. և տափակ է, և թիզ մի և յետեւն կայ ճիշեա, և զտերեւն կու հնձնն և կու քամեն սոխրէ, և զնուրն կու սանուն ի թազարնի կու նուն, և ի յարեւն կու զնեն՝ որ կու թանձրանայ և շորս ո նայ որպէս Աղաղիսւ. . . Ասել են թէ Սուզուտրին կղզի մի է և մօտիկ է Եամանօն. ո ծովեզերէն մինչեւ, յայն կղզին 40 փարասնկ է. և այն կղզոյն մարդիկն ամենն ո անհաւաք են և կախարդը են, խիստ տօնով. և նոցա բնական տեղին յառաջն ի ք Հասունց երկիրն էր, և Սղեքասնդր թագաւոր Մակեգոնացին՝ զնորա ի Հասունց ո երկրէն ի յայն կղզին քինաց և սպարկեաց, որ ի հոն բնակեցան վասն Սապա շին նելու համար, որ է Սապր Սուզուտրի. և նաքա են գրեւալ զայս գդտութիւնն իւս

բեանց բառովնեւ, և այժմ՝ զրեցաք մեք այլ ի մեր բառն։ Եւ աղէկ Սապա Սուզու-
ս տրի այն է՝ որ ի լեռդ նմանի գունովն։ և հոտն զէտ Մուսի հոտ լինի, և փայլուն
յ լինի որպէս Զամի արապի, և ի
ձեռքն շուտ տրորի, և գոյնն Զաֆրանի
» գոյն լինի և յիբմէն ոչխարի եղի հոտ
» գայ.. Գալիքենոս ասէ, թէ զայս ի
» վերոյ գրեալ պատմութիւնն ես ըն-
» դունել եմ, Աստուծով։ — Այս
գովաճի Հարուէն կոյուի լ, Ալօ Տօ-
սուրինա, և այլ եւ այլ տեսակներ ունի.
լեզուահամ հրւիթն կամ քամուքսն ի
հնուց մինչեւ հիմայ դեղ է, մանաւանդ
առամցիք։

1898. ՀայուԵի Փալտ.

Հաղուէ.



Lünenk.

1702. * Հնդիկ Արմաւենի.

Պտուղն այլ Հնդկարմաւ. բայց ի նորոց յարմարած կամ թարգմանած է, զոր ամեն ազգը ինչպէս և մեր Բժշկարանք Ար. անուամբ կոչեն թմր հինտի, (որոյ բառակարգին կու վայլէր զրել). Լ. Tamarindus Indica, Փ. Tamarin, Tamarinię. իր եղջերածեւ պտղոյն բժշկական գործածութեանն համար՝ հիմայ հանրածանօթ բերք մ'է. լսենք մեր Ամասիացւոյն. « Թմրհնդի, ինքն ցեղ-մն է և յացանի է. » լաւն այն է որ խիստ թթու լինի և նոր. հով է և արճ. և չոր է և արճ. « (միշտ օգուտոները)... իր առնելուն շանի 18 դրամ. բայց կրծոց զին է. և զիւր շարութիւնն տանի Խաղխղին շարապն, և իր փոխան Սալորն է որ թթու լինի:



Հնդիկ Արմաւ.

» Ասէ Պտ. թէ Համբ ասեն, և Ապաստան այլ ասեն, և նորը է քան զԱս. « լորն, այլ գիտացիր՝ որ հացին և կրծոց զին կ'առնէ. և զիր շարութիւնն տանի » Մանուշակն, և իր շարապն և ՚Ոի ձէթն «: — Բնութեանն համար կ'ըսէ ուրիշ Բժշկը. մի « ինքն նոսր է քան զիսանն, և այլ պակաս զինութիւն ունի. և ո է հով և արճ. և գէճ և արճ. օգտէ որ կիծ և ծարաւ ունենայ, և տարօ. » թիւններ և թալնալ.. զսաֆրան լուծանէ և զարիւնն խաղաղէ »:

1761. Հօրու Մօրու. Հօրուտ Մօրուտ. Խորու Մորու.

Թուի իմն թէ խեղեփ ծաղկներ են, և ի հնուց շատ ծանօթ ի Հայս, ուր մինչեւ հիմայ լսուի, սակայն լսողքն և ճանշցողք՝ չեն միարան. ուրիշ տեղ այլ միեւցինք որ լեռնային ծաղկանց կարգումն էր ըստ Արակախօսին մերոյ, որ և բաց

տառերով գրած է Հայրուտ Մարդուս, որով կ'իմացուի թէ պէտք է զրել հիմայ օ տափու և ոչ ո. Գաֆիենսի բառ զիբքն զուգէ ընդ Եղերորսի. օրինակաց մէջ գրուած է Եղերորդու կամ Եղերորդորու, հայերէնն այլ Հայրուտ կամ Հայրուտ փոխանակ Հայրուսի, իրեւ ծանօթ յիշէ հին Բժշկարանն. « Թէ խոցն » որդէն՝ (որդնոտի), Հօրօս Մօրօս ծազկի տակ աղա մանր, մեղրով և քաշուով « շաղէ և դիր, թափէ զորդն »: Կոր ծանօթարարը մեր կ'ըսեն թէ թուրիս ծաղիկն է աս մանրիկ կապուտակ փնջաձեւ անուշահոտ, և աղբերաց եղերը գլունը. իսկ Մաղկերգուն նշանակէ դոյնն այլ.

« Խօրօս Մօրօս մասի ներկաս ժանկառի նըման սուրմայուն, Աչեր հազար պիտի նայի, խառներ հետ Ախայիննձորուն ո: (թ. 31):

Այս և նորոց վկայութիւնն ցուցընէ որ Մի. Գոյէ քանի մի գար վերջը՝ Հօրօս Մօրօս և իր ցեղակից Ասպոգանն և նմանիքն իներ են լեռներէն վայր ի դայտու. կամ լաւ եւ ըսել, ոչ միայն ի լիրինս՝ այլ և ի բարձրաւանդակ դաստագետնոս այլ գտուին: — Ըստ Եէկրմի. է Հյացինթոս Օրիալի, Արեւելեան Յակինթ: — Հօրօս Մօրօսի անունն գուշակել տայ առասպելական ծագումն, մանաւանդ երբ յիշուի ի Պարսից մէջ այլ լսուած աւանդութիւն մի. ըստ որում՝ Այսոր և Մարտոր երկու հրեշտակէ էին, զորս խաւրեց Աստուած յերկիր՝ վիսեղն մարդիկ մվիթարելու համար. բայց կ'երեւի թէ շատ վատահ չէր իր նուիրակաց վրայ, որոց իրատներ այլ տուակ գգուշութեամբ վարուելու. սակայն անոնք (նման ի Ա. Գիրս յիշուած որդուցն Աստուածոյ) հետեւեցան որդուց մարդկան հեշտասէք բարուց, կամ զայս տառաղողներուն, որք քան զիրեշտակ' զԱստուած նուաստացընեն այսպիսի օրինակաւ:

1762. Զագախուտ. Զագիխուտ. Զագուխուտ.

Հաստ Բժշկուանք համարին զայս միայն Փարանգամոշչի կամ Յարդնամոշչի. բայց Ամիրտ. երկու տարրեր բայց դրէ. մէկն՝ այս պարսիկ բառով, զոր տես ի կարգի ժ տասի, մէկ մ'այլ Ալ. Թուտարի « Զագու խոտ, որ է երկու երեք » ազգ Թաւուարիքն. Զագու խոտ-մի (այլ) որ է Յարաննամոշչըն »: Այս յիշին և զուգելին ընդ Զագիխուտի է տուալին. Ար. բայց. Լ. Erysimum կամ Երցիսուստ, Փ. Նելար, Բ. Պոլևայ ցօրքուա. « Ինքն երկու ազգ է, մէկն սպիտակ » և մէկն կարմիր, մէկն յածվենիքն կու լինի. մէկն ի լերունքն և ի գաշուերն ո կու բոււնի. և լաւ այն է որ գեղնբար լինի.. բացող և ճիշտ տվող է. և թէ ո ծեծեն և մեղրով յաշխն քաշեն՝ զիսցն կ'ողացրնէ.. Ասէ Պտ. թէ թուա « տարրեած կ'ասեն և Պաղո ըլ-ականայ կ'ասեն (և այլ հինգ վեց անուանք) ». և « Թուտարին շրո ցեղ է. Դեղին, Սպիտակ և Կարմիր, և կու լինի որ բաց հալուղի ո է, և լաւ գեղինն է.. թէ մեղրով և ջրով օծեն ուռեցին՝ օգտէ. և որոց ա. կանթթոռքն լինի ուռեցն՝ այնոր այլ օգտէ.. Եւ այսոր Հ. Զագիխուտ կ'ասեն. և ի վերաց պատերուն և յածվենիքն այլ կու բոււնի ո. — Զագիխուտ շատ տեսակ ունին և խաչաձեւից ցեղէն խոտեղէնք են, ունանք գիմացկուն. հասարակօրէն վրանին գորշագյն ճիւղի պէտ մազմզուկ ունին. ամենէն ծանօթ տեսակն Լ. E. Officinale, Փ. Կոտոր Tortelle կամ Herbe aux chantres. յատուկ Հայկական տեսակ մ'այլ կոյ Է. Արտենիաս ի Կարին և ի Պինկէօլ տեսնուած. մէկ գլխաւոր տեսակն այլ է Ախամբարեան, Է. Sisymbroides, յԵրեւան, Առըրպատական. — Անկտեսակն Է. Aureum ի Ռ-Հ. — Thyssoideum, ի Մնձուր. Թէքտուալ. — Է. Uncinatifolium (կեռսերիւ) ի Մէկմանսուր, Մանախ. — Է. Gelidum, (ասանդրակ) յԱրագած լ. — Purpureum (ծիրանեցոյն) ի Հայք. — Է. Pulchellum (զեղաղէշ) ի Ռ-Հ. — Է. Leptophyllum ի Գարապաղ. — Է. Ganyum, և Pasgalense, ի Դավրէժ, Աւրմիս, եւ այլն, եւ այլն.

1764. Զագի լեզու»

Որ և ձնճկալեզու. Ար. այլ նոյն նշանակութեամբ Լիտան ըշ-ասաֆիր և Սան. մեր բժշկական բառագրոց մէկն այլ լ. • Թարգմանութիւնը գրէ Լիենցիա ավիս, այսինքն Lingua avis, որ է Թառնց լեզու. Փ. Langue de passereau. որշափ անունն կարծեցընէ նման բան մի, իրն բոլորովին տարրեր է. և ինքն « Տարուարին պտուղն է », կ'ըսէ Ամիրտ. և օտարք այլ այսպէս ճանաշեն, Փ. Fraise de Frêne. և Պոլին. ասէ, թէ ինքն ծառի մի միրգ է, որ Պ. Ամր կ'ասէ, և Ղուզակի քունձուչ կ'ասէ... իր ծառին տերեւն կապող է.. իր փոխանն կար. » միր թօսարին է և կարմիր Պահմանն, և Հայերն կ'ասեն՝ թէ այսոր Զագու « լեզու կ'ասեն, և իր ծառին Հացի փայտ կ'ասեն ». զոր տես թ. 4662: — Կամարկապցին գրէ. « ինքն ծառ է, և տերեւն միջն հանէ զինքն » ։

1765. Զառաւտաղ. Զեռաւտաղ. Զառաւտաղը տակ.

Լաւ կ'ըսէ Բժշկարան մի, « Զարխոստն շատ անուն ունի. յոր տեղ որ քարէն և չուր ճռայ (կաթէ, հոսի). անդ բռուանի. Թ. Ղարայ պարտոր կ'ասէ, Հ. Մ'օրուք և բայց Հայն կ'ասէ նա եւ Զար Պասկու, Դիւռ ձար (Թ. Դեկ սախալի), Այկ-զորի մազ. Գետնի ձար, Մարդգայու ձար, Խոզի մազ, Գետնի իմձոր, Ջրհորի Գինճ, Քարափի ցոյր, Պաշաշոշան, որ է Պ. Փարափ եօշան بجیاوشان. Գետնի ձարն այլ Ար. է Շարի ըլ-արզ շعر الرض شعر الضر Ակէզօրի մազն՝ Շար էլ-անն. Խօզի մազն՝ Շար ըլ-խորդիր, Ջրհորի գինճն՝ Քոզզպարար իշչ-պէր. Յ. և Լ. աղնուացը-նելով՝ Աստղկան մազ կոչեր են, Capillus Veneris, Փ. պարզ Capillaire կոչն: Ամիրտ. յետ յիշելու այլ եւ այլ անուններ, կու բացատրէ. և ինքն սեւ ու հաստ » մաղի պէս է, և տերեւն նման է Գնձի տերեւին. և տակն քիչ է, և բնու- » թիւնն մուհթատիլ է և նուրբ է. զմազն յերկնցընէ և ուժովցընէ, և զտաքու-» թիւն կու խաղեցընէ... Ասէ Պու. (յետ տանի շափ անուններ յիշելու) թէ » լաւն այն է որ սեւ լինի և տերեւն կանանց, և այլ աղէին այն է որ որձան » ի կարմրութիւն քշուէ »: — Արիշ Ար. անուամբ այլ գրէ Ամիրտ. « լինայ » ըլ-Ղոդ, Թ. Դեկ սախալի, որ ինքն յերրորդում ՞ (կիմայն) կու լինի. և ի » գետնէն զէտ մազ կու եղանէ, և տերեւն ու ճուղ շոնի.. թէ այն մարդիկ որ » հետեւակ քայլենի թեւն կապեն շօզնին: » Ար. բառն Ղոդ ճիւաղ նշանակէ, և բայսն այլ տարրերի ի Զագիստէ. Լ. կոչուի Ասրենիու Trichomanes. Սա կովկասու երկու կողմի գաւառաց մէջ գտուած է, որով և ի Հայո. յայտ է թէ և Զար-խոստն, որ ուսումնական անուամբ Լ. կոշուի Adiantum. Փ. Adianto, ի Յ. բառէ, որ նշանակէ անխոնաւ, անթաց, իրը թէ երր Աստղիկ ի ծովին ելեր է մազերն չոր մմացեր են. անոր համար կանայք շատ ի գործ ածէին այս բայս մազերնին շատ և փայլուն պահելու համար: — Հին Բժշկարանն Զագիստի զուգէ Աս-» րառէն արեւելեան անունը. բայց սա ճանցուած է Նուարտակ: Բանասիրաց թո-» զումք յայտնել, թէ ինչ է պատճառ Զարիստի այսքան անուանց և մանաւանդ առասպելմաննից, և որ ազգի մէջ ծագած է, և ինչպէս արեւելեայք և ա-» րեւմտեայք ընդուններ են:

